ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 մարտի 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վարուժան Մելքոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Կարապետ Քարտաշյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի N 4 չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 25.02.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի մարտի 04-ին, Ժամը՝ 10:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում 10 անվանում սննդամթերքի ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի 04 մարտի ժամը՝ 10:30-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N4 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ին, «Դաննիկ» ՍՊԸ-ին, «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ներին (համատեղության կարգով)՝ հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N4 չափաբաժնի մասով «Ցիկլոիդ» և «Դաննիկ» ՍՊԸ-ները ներկայացրել էին հավասար գնային առաջարկ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի ունեցավ 07.03.2019 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Նիստին ներկա էին «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ների (համատեղության կարգով) լիազորված անձ՝ Նարեկ Մանուկյանը և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի լիազորված անձ՝ Նելլի Հովհաննեսյանը: Նիստին չէր ներկայացել «Դաննիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

1.4 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի N4 չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար հանձնաժողովը տրամադրեց 15 րոպե ժամանակ, որպեսզի յուրաքանչյուր մասնակից ներկայացնի իր վերջնական գնային առաջարկը: Նշված ժամանակի ընթացքում՝ «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ները (համատեղության կարգով) և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն N 4 չափաբաժնի մասով ներկայացրել են նոր գնային առաջարկներ, իսկ «Դաննիկ» ՍՊԸ-ն չի մասնակցել բանակցություններին:

1.5 Ստորև ներկայացվում է 07.03.2019թ.-ի ժամը 11:00-ին «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստի ժամանակ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների նվազեցված գնային առաջարկները՝ N4 չափաբաժնի մասով:

Հ/հ	Գնման ապրանքի անվանումը	Գնման առարկայի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ)			
			«Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ներ (համատեղության կարգով)		Ցիկլոիդ» ՍՊԸ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն
4	Հավի ազդրամիս	11000000	5066666,67	6080000	5075000	6090000

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում 10 անվանում սննդամթերքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի N4 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի N4 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ներին (համատեղության կարգով), որի գնային առաջարկն ամենացածրն է և չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Ծանուցել «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ներին (համատեղության կարգով)՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2.3 Հարցում չուղարկել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե քանի որ, «Լեբրոն» և «Գարդմեն» ՍՊԸ-ները (համատեղության կարգով) հանդիսանում են «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի NN1,3,5,7,9,10 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե արդեն իսկ ներկայացվել է հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև կարգով սահմանված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ուստի երկրորդ անգամ նշված հարցումը ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան ուշին տեղ գբաղեցրած մասնակիցների կողմից, հրավերով նախատեսված՝ որակավորման անիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից հատելու և ՊԵԿ-ի կողմից հարցման պատասխանը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ը 11.00-ին, ՔԿ ծառայության մասնաշենքում, որը գտնվում է Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Կ. Մելքոնյան

Գնահատող անդամներ

1 ..... Հ. Հովհաննիսյան

2 ..... Կ.Քարտաշյան

Քարտուղար՝ ..... Ն.Աբովյան

<<Լեբրոն>> և <<Գարդմեն>> ՀՁ ՍՊԸ-ի լիազորված անձ ..... Նարեկ Մանուկյան

<<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի լիազորված անձ ..... Նելլի Հովհաննեսյան